ԱԿՏ-Արձանագրություն N 2
№218/GArm/26_5.4_101/22.06.26 ծածկագրով
Մրցակցային ընտրության հանձնաժողովի

ք. Երևան 07 հուլիս 2026
Ժամը՝ 11:25

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Լալայան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Մակարյան, Կ.Մինասյան, Տ.Հայրապետյան Հ.Յումուշաղջյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ. Խաչիկյան

1. Մրցակցային ընտրության հայտերի բացման նիստ

1. Մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված կարգով և դրան համապատասխան կազմված ծրարով հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Հասցե
1	«ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ	ՀՀ ք. Աբովյան, Հատիսի փ 1/108/2 հեռ. 077 390339
2	«Ստրոյգիգանտ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան, Ավան, Հ. Հովհաննիսյան 27/3 հեռ. 033 273747

«ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ կողմից ներկայացված մրցակցային ընտրության փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը առկա են և համապատասխանում են մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված կարգին:

«Ստրոյգիգանտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված մրցակցային ընտրության փաստաթղթերով պահանջված փաստաթղթերը թերի են և չեն համապատասխանում մրցակցային ընտրության փաստաթղթերով սահմանված կարգին:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 3, դեմ - 0:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն է.

Հ/Հ	Մասնակիցների կողմից առաջարկվող գները ՀՀ դրամով	
	«ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ	«Ստրոյգիգանտ» ՍՊԸ
1	363545039 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն	370000000 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն

Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Մրցակցային ընտրության արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց անմիջապես գնահատել մասնակցի որակավորումը և նրա համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

ա. Մասնակիցների որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերում անհամապատասխանություններ չեն հայտնաբերվել:
Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:
բ. Հանձնաժողովը որոշեց գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:
գ . Հիմք ընդունելով գնահատման թերթիկը հանձնաժողովը որոշեց անմիջապես հաստատել գնահատման արդյունքները.

«ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ – բավարար
«Ստրոյգիգանտ» ՍՊԸ - անբավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվող գնումների մասին կարգի համաձայն հանձնաժողովը որոշեց մրցակցային ընտրության առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ-ին՝ որպես բավարար գնահատված մրցակցային ընտրության հայտ և տնտեսապես շահավետ գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովը որոշեց՝
Հանձնաժողովը որոշեց՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի և «ԱՊԷՔՍ ԲԻԼԴ» ՍՊԸ-ի միջև կնքել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Թբիլիսյան խճուղի 43/2 հասցեում գտնվող շենքի նորոգման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր՝ անգործության ժամկետը ավարտվելուց հետո:
Պայմանագրի գինը կազմում է՝ 363545039 ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի		
Նախագահ		Ա. Լալայան
Անդամներ		Վ.Մակարյան
		Կ. Մինասյան
		Տ. Հայրապետյան
		Հ. Յումուշաղջյան
Քարտուղար		Գ.Խաչիկյան